ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.05.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/16

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 18.04.2019թ. թիվ 26/26-1/6525-2019 գրությամբ «Բիզնես Էքսպերտ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի 29.03.2019թ. թիվ 04/16.22/2134-19 գրության հիման վրա, 18.04.2019թ. «Բիզնես Էքսպերտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեն 29.03.2019թ. թիվ 04/16.22/2134-19 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը հաստատելու մասին թիվ 526-Ն որոշման 49-րդ կետը Ձեզ եմ ներկայացնում ՀՀ ՏԶՆՆ պետական գույքի կառավարման կոմիտեի կարիքների համար շենք-շինությունների չափագրման և հատակագծերի կազմման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՊԳԿԿ-ԳՀԾՁԲ-2019/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առաջին և երկրորդ փեղեր զբաղեցրած մասնակիցների՝ «Բիզնես էքսպերտ» ՍՊԸ-ի փվյալները /մասնակիցի կողմից «ՊԳԿԿ-ԳՀԾՁԲ-2019/2» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացված դիմումները:»:

3. <u>«Բիզնես էքսպերտ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 25.04.2019թ. գրությամբ դիմել է «Բիզնես էսպերտ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.04.2019թ. թիվ 26/26-1/6525-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր կարծիքը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր կարծիք չի ներկայացվել:

«Բիզնես էքսպերտ» ՍՊԸ-ն պատշաճ ծանուցվել է նիստերի օրվա ժամի և վայրի մասին, սակայն ընկերություն կողմից որևէ անձ չի ներկայացել նիստերին:

4. <u>ՍՑ-LO-2019/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

ՀՀ ՏԶՆՆ պետական գույքի կառավարման կոմիտեի կարիքների համար շենք-շինությունների չափագրման և հատակագծերի կազմման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՊԳԿԿ-ԳՀԾՁԲ-2019/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Բիզնես Էքսպերտ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 14.02.2019թ. թիվ 2-3.3 արձանագրության համաձայն՝ 18.02.2019թ. գումարվել է արտահերթ նիստ, որտեղ քննարկվել է «Բիզնես Էքսպերտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիմումը այն մասին, որ թյուրիմացաբար գնային առաջարկում ընդհանուր գումարի փոխարեն նշվել է միավորի արժեքի գումարը և դիմել է հանձնաժողովին, որպեսզի գնային առաջարկը հաշվարկելիս ընդունվի ներկայացված գինը բազմապատկելով հրավերով նախատեսված ընդհանուր քանակին:

Նույն արձանագրությամբ հանձնաժողովը որոշել է ներկայացված գնային առաջարկը ընդունել ոչ թե որպես միավորի արժեքներ, այլ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գներով:

Հանձնաժողովը որոշել է ներկայացված գնային առաջարկների հիման վրա 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Բիզնես Էքսպերտ» ՍՊԸ-ին:

Հանձնաժողովի 26.02.2019թ. թիվ 2-4 արձանագրության համաձայն՝ Ընկերությունը ճանաչվել է ընտրված/հաղթող/ մասնակից և վերջինիս ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ:

«Բիզնես Էքսպերտ» ՍՊԸ-ն 21.03.2019թ. դիմել է Հանձնաժողովին հայտնել է, որ մասնակցելով Ընթացակարգին ներկայացրել է միավոր գին՝ 27 դրամ: Ընկերությունը ցանկացել է հետ կանչել հայտը, սակայն չի ստացվել: Այդ ամենի մասին տեղեկացվել է Պատվիրատուին և խնդրել է հաշվի առնել ծառայությունների ընդհանուր գինը:

Հանձնաժողովի 27.03.2019թ. թիվ 2-6 արձանագրության համաձայն՝ «ՊԳԿԿ-ԳՀԾՁԲ-2019/2» ծածկագրով ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցը պայմանագրի նախագծի ծանուցման հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ներկայացրել իր կողմից հաստատված պայմանագրի 2 օրինակը և վճարման պահանջագիրը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացությանը, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.04.2019թ. թիվ 26/26-1/6525-2019 գրությամբ «Բիզնես Էքսպերտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 32-րդ կետի 13-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի

նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը.

Նույն կետի 14-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում,

- 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

ՀՀ ՏՋՆՆ պետական գույքի կառավարման կոմիտեի կարիքների համար շենք-շինությունների չափագրման և հատակագծերի կազմման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՊԳԿԿ-ԳՀԾՁԲ-2019/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ է ներկայացրել «Բիզնես Էքսպերտ» ՍՊԸ-ն և Հանձնաժողովի որոշման հիման վրա ճանաչվել է ընտրված/հաղթող/ մասնակից:

Ընկերությանը ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ, սակայն գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում, այն է՝ ծանուցման հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ներկայացրել իր կողմից հաստատված պայմանագրի 2 օրինակը և վճարման պահանջագիրը:

Տվյալ դեպքում ընտրված/հաղթող/ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացրել պայմանագիրը և վճարման պահանջագիրը, որպիսի պայմաններում այդ հանգամանքը համարվում է որպես պայմանագիր կնքելուց հրաժարում, որը նախատեսված է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Բիզնես Էքսպերտ» ՍՊԸ-ն, որպես

ընտրված/հաղթող/ մասնակից, հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելով պայմանագիրը և վճարման պահանջագիրը, հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.04.2019թ. թիվ 26/26-1/6525-2019 գրությամբ «Բիզնես Էքսպերտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Բիզնես Էքսպերտ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու (2) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ